ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՊՈԱԿ-ի տնօրեն

Ա. Օբոսյան

«_03_» _հունվարի_ 2025թ.

ԿԱՐԳ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՌԵԵՍՏՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ, ՉՆԵՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՌԵԵՍՏՐԻՑ ՀԱՆԵԼՈՒ

K-07

ՄՇԱԿԵԼ Է

Կառավարման համակարգի մենեջեր

_Նազիկ Աբգարյան_____

(անուն, ազգանուն, ստորագրություն)

Գործարկման թվականը՝ __03.01.2025թ.__

Երևան 2025

Բովանդակություն

1. Կիրառման ոլորտը 3
2. Նորմատիվ վկայակոչումները 3
3. Տերմինները, սահմանումները և հապավումները 4
4. Ընդհանուր դրույթները 5
5. Հանձնաժողովի գործունեության կարգը 7

1. Կիրառման ոլորտը

Սույն կարգը սահմանում է համապատասխանության գնահատման մարմիններին (ՀԳՄ) Եվրասիական տնտեսական միության ռեեստրի ազգային մասում (այսուհետ՝ միասնական ռեեստր) ներառելու, չներառելու կամ ազգային մասից հանելու ընթացակարգը:

2. Նորմատիվ վկայակոչումները

Սույն փաստաթղթում վկայակոչված են հետևյալ փաստաթղթերը՝

Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիր, 29.05.2014թ.

«Հավատարմագրման մասին» ՀՀ օրենք

ՀՀ կառավարության 2024 թ. նոյեմբերի 15-ի «Ազգային և Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգման ազգային և Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգման ոլորտի շրջանակներում հավատարմագրված համապատասխանության գնահատման ոլորտի շրջանակներում հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների և դրանց կողմից տրամադրված, գրանցված համապատասխանության մարմինների և դրանց կողմից տրամադրված, գրանցված համապատասխանության գնահատման փաստաթղթերի ռեեստրների վարման կարգերը և չափանիշները գնահատման փաստաթղթերի ռեեստրների վարման կարգերը և չափանիշները սահմանելու մասին սահմանելու մասին» N 1795-Ն որոշում

ՀՀ կառավարության 2020թ. փետրվարի 13-ի «Համապատասխանության գնահատման հավատարմագրված մարմինները (այդ թվում սերտիֆիկացման մարմիններ, փորձարկման լաբորատորիաներ (կենտրոններ)) ԵԱՏՄ համապատասխանության գնահատման մարմինների միասնական ռեեստրում ներառելու, ինչպես նաև այն ձևավորելու և վարելու կարգի մասին» N 152-Ն որոշում

ԵԱՏՀ Խորհրդի 2023թ. մայիսի 22-ի Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 100 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 62 որոշում

ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17000-2012 Համապատասխանության գնահատում. Բառարան և ընդհանուր սկզբունքներ

ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011-2018 Համապատասխանության գնահատում. Համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրում իրականացնող հավատարմագրման մարմիններին ներկայացվող ընդհանուր պահանջներ

PR-7 Հավատարմագրման ընթացակարգը և ընդհանուր պահանջները

PR-03 Հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման ոլորտի արդիականացման ընթացակարգ

K-02 Հավատարմագրման կոմիտեների գործունեության կարգ

3. Տերմինները, սահմանումները և հապավումները

Սույն կարգում կիրառված են «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքով, ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17000, ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011 ստանդարտներով, ՀՀ կառավարության 2024թ. նոյեմբերի 15-ի N 1795-Ն, ՀՀ կառավարության 2020թ. փետրվարի 13-ի N 152-Ն, ԵԱՏՀ Խորհրդի 2023թ. մայիսի N 62 որոշումներով սահմանված տերմիններն ու սահմանումները:

<u>Հապավումները.</u>

ԱՐՄՆԱԲ՝ «Հավատարմագրման ազգային մարմին» պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՀԳՄ՝ համապատասխանության գնահատման մարմին

ԵԱՏՄ՝ Եվրասիական տնտեսական միություն

ՄՄ՝ Մաքսային միություն

ԵԱՏՀ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողով

ՍՄ՝ սերտիֆիկացման մարմին

ՓԼ՝ փորձարկման լաբորատորիա

ՀԻՄ՝ հսկողություն իրականացնող մարմին:

4. Ընդհանուր դրույթները

4.1 ՀԳՄ-ներին միասնական ռեեստրում ներառելու կամ ռեեստրից հանելու պահանջները, չափանիշները, ինչպես նաև ռեեստրների ձևավորումն ու վարումը սահմանված են ՀՀ կառավարության 2024թ. նոյեմբերի 15-ի N 1795-Ն, ՀՀ կառավարության 2020թ. փետրվարի 13-ի N 152-Ն և ԵԱՏՀ Խորհրդի 2023թ. մայիսի N 62 որոշումներով:

4.2 Միասնական ռեեստրի ազգային մասում ներառվում են հետևյալ ՀԳՄ-ները՝

- արտադրանքի սերտիֆիկացման մարմինները, որոնք իրականացնում են ԵԱՏՄ/ՄՄ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության գնահատման ենթակա արտադրանքի սերտիֆիկացում և/կամ համապատասխանության հայտարարագրերի գրանցում (այսուհետ՝ ՍՄ),

- փորձարկման լաբորատորիաները (կենտրոնները), որոնք իրականացնում են ԵԱՏՄ/ՄՄ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության գնահատման ենթակա արտադրանքի փորձարկումներ (այսուհետ՝ ՓԼ),

- հսկողություն իրականացնող մարմիններ, որոնք իրականացնում են ԵԱՏՄ/ՄՄ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության գնահատման աշխատանքներ (այսուհետ՝ ՀԻՄ):

4.3 Միասնական ռեեստրում ՀԳՄ-ներին ներառելու, չներառելու, հավատարմագրված ՀԳՄ-ներին ռեեստրից հանելու, վերականգնելու մասին որոշումներն ընդունվում են Հանձնաժողովի կողմից՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2024թ. նոյեմբերի 15-ի N 1795-Ն որոշմամբ սահմանված չափանիշները և Հավատարմագրման կոմիտեների (K-02) որոշումները, իսկ

հավատարմագրման ոլորտի արդիականացման դեպքում՝ տնօրենի կողմից ընդունված որոշումները:

4.4 ՀԳՄ-ները միասնական ռեեստր ներառվելու վերաբերյալ նշումով հավատարմագրման հայտը և կից փաստաթղթերը ներկայացնում են ԱՐՄՆԱԲ-ին:

4.5 ՀԳՄ-ներին միասնական ռեեստրում ներառելու նպատակով հավատարմագրման ոլորտի արդիականացումն իրականացվում է համաձայն PR-03 ընթացակարգի:

4.6 ՀԳՄ-ներին միասնական ռեեստրում ներառելու ամսաթիվ է համարվում Հանձնաժողովի կողմից համապատասխան որոշումն ընդունելու ամսաթիվը:

4.7 Հավատարմագրումը կասեցնելու (մասնակի կամ լրիվ) որոշումը կայացվում է Հավատարմագրման կոմիտեի կողմից համաձայն PR-7-ի և հիմք է հանդիսանում միասնական ռեեստրի ազգային մասում հավատարմագրման կարգավիճակը փոփոխելու համար:

4.8 Միասնական ռեեստրից հանելու վերաբերյալ որոշումն ընդունվում է հետևյալ դեպքերում՝

ա) Հանձնաժողովի կողմից ռեեստրից հանելու վերաբերյալ որոշումը (օրինակ՝ փաստերի առկայություն, որոնք հաստատում են, որ հավատարմագրված ՀԳՄ-ն դադարել է համապատասխանել 5.1-5.3 կետերով սահմանված չափանիշներին և այլն),

բ) ռեեստրից հանելու վերաբերյալ ՀԳՄ-ի դիմումը:

4.9 ՀԳՄ-ին միասնական ռեեստրից հանելիս նշվում է «հանվել է» կարգավիճակը, ինչպես նաև այդ որոշումն ընդունելու ամսաթիվն ու պատճառը:

4.10 ՀԳՄ-ներին միասնական ռեեստրից հանելու ամսաթիվ է համարվում Հանձնաժողովի կողմից համապատասխան որոշումն ընդունելու ամսաթիվը:

4.11 ՀԳՄ-ին միասնական ռեեստր ներառելու կամ ռեեստրից հանելու վերաբերյալ գրանցամատյանի ձևաչափը սահմանված է K-07-02 հավելվածով, որի վարման պատասխանատուն հանդիսանում է մարդկային ռեսուրսների պատասխանատուն:

5. Հանձնաժողովի գործունեության կարգը

5.1 Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են նիստերի միջոցով:

5.2 Հանձնաժողովն ստեղծվում է ԱՐՄՆԱԲ-ի տնօրենի հրամանով: Հանձնաժողովի անդամներ են հանդիսանում ԱՐՄՆԱԲ-ի տնօրենը և 2 աշխատակից, ովքեր չեն մասնակցել միասնական ռեեստրում ներառվող ՀԳՄ-ի գնահատման գործընթացին:

5.3 Հավատարմագրման կոմիտեի կողմից ՀԳՄ-ի հավատարմագրման վերաբերյալ համապատասխան որոշումն (հավատարմագրում, հավատարմագրման ընդլայնում, կրճատում, կասեցում (լրիվ կամ մասնակի), վերականգնում, դադարեցում) ընդունելուց և այն ազգային ռեեստրում ներառելու օրվանից 2 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովն որոշում է ընդունում այդ ՀԳՄ-ին ԵԱՏՄ միասնական ռեեստրի ազգային մասում ներառելու, չներառելու, ռեեստրից հանելու, հավատարմագրումը կասեցնելու (լրիվ կամ մասնակի), վերականգնելու վերաբերյալ համաձայն սույն կարգի հավելված K-07-01-ի:

5.4 Հանձնաժողովի նիստին մասնակցում է նաև ռեեստրների վարման բաժնի պետը: Նիստին կարող են հրավիրվել տվյալ ՀԳՄ-ի գնահատման գործընթացն իրականացրած գնահատման խմբի ղեկավարը՝ ԱՐՄՆԱԲ-ի գնահատողը, միասնական ռեեստրում ներառվող ՀԳՄ-ի ներկայացուցիչը:

5.5 ՀԳՄ-ին միասնական ռեեստրում չներառելու վերաբերյալ Հանձնաժողովի կեղմից որոշում կայացնելուց հետո ԱՐՄՆԱԲ-ը 2 աշխատանքային օրվա ընթացքում ՀԳՄ-ին գրավոր տեղեկացնում է՝ նշելով բացասական որոշման հիմքերը:

5.6 ԱՐՄՆԱԲ-ի ռեեստրների վարման բաժնի աշխատակիցը ոչ ուշ, քան Հանձնաժողովի կողմից համապատասխան որոշումն ընդունելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում ինտեգրված համակարգի միջոցով ԵԱՏՄ Հանձնաժողով է ուղարկում համապատասխան տեղեկատվությունը՝ միասնական ռեեստրում ներառելու համար: